ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ՝

Արդարադատության ակադեմիայի ռեկտոր,

իրավաբանական գիտությունների դոկտոր,

պրոֆեսոր _____ Ս.Վ.Առաքելյան

ԿԱՐԾԻՔ

ԱՌԱՋԱՏԱՐ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ

Սոնա Արմենի Մանթաշյանի «Հայաստանի տարածքային շահերին վերաբերող XX դարի սկզբին ստորագրված պայմանագրերի վավերականության խնդիրը» վերտառությամբ ԺԲ.00.06. – «Միջազգային իրավունք» մասնագիտությամբ իրավաբանական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման համար ներկայացված ատենախոսության վերաբերյալ

Գրախոսվող թեկնածուական ատենախոսությունը նվիրված է XX դարի սկզբին կնքված մի շարք միջազգային պայմանագրերի վավերականության հիմնախնդիրների ուսումնասիրությանը: Հեղինակը, ըստ էության, փորձ է կատարել մշակել այնպիսի գիտական աշխատանք, որը կհանդիսանա ուսումնասիրվող թեմայի վերաբերյալ առաջին համապարփակ իրավական հետազոտությունը:

Հետազոտության շրջանակներում ուսումնասիրվող պայմանագրերով իրավական ձևակերպում ստացավ Հայաստանի պատմական տարածքների կորուստը, ինչով իսկ այդ փաստաթղթերը ուղղակիորեն ներգործություն ունեցան Հայաստանի՝ որպես ինքնիշխան պետության, հիմնարար իրավունքների վրա և շարունակում են ունենալ մինչ այժմ: Հետևաբար, անվիճելի է, որ Հայաստանի համար խնդրո առարկա պայմանագրերի վավերականության հարցը կարևոր նշանակություն ունի արդեն իսկ դրանց օբյեկտի մակարդակում:

Բացի վերոնշյալից՝ **ընտրված թեմայի արդիականությունը** պայմանավորված է նաև այն փաստով, որ աշխատանքը պարունակում է միջազգային պայմանագրերի անվավերության ինստիտուտի խորը ուսումնասիրություն և վերլուծություն, ինչպես նաև դրա շրջանակներում առկա տեսական և պրակտիկ խնդիրների բացահայտում, այնուհետ վերջիններիս լուծման մեխանիզմների ձևավորում: Հետազոտության շրջանակներում ուսումնասիրության առարկա հանդիսացող վավերականության կատեգորիան, հանդիսանալով միջազգային պայմանագրերի իրավունքի համակարգման տարր, ուղակի ազդեցություն ունի ոլորտի գործունեության որակի, որպես հետևանք նաև միջազգային պարտավորությունների կատարման և առհասարակ միջազգային իրավունքի համակարգի արդյունավետության վրա: Վերոգրյալը հատկապես ակնհայտ է դառնում հաշվի անելով միջազգային հանրության կողմից որպես վերջինիս գլխավոր նպատակներից մեկը ամրագրված միջազգային խաղաղության և անվտանգության պահպանումը, որի իրագործման գործիքներից մեկն է միջազգային վեճերի խաղաղ, և դրանք պայմանագրային եղանակով լուծումը:

Հայցորդի **ուսումնասիրության առարկան են** ինչպես խնդրո առարկա պայմանագրերի կնքման ժամանակ, այնպես էլ ժամանակակից միջազգային իրավունքի համատեքստում գործող ուսումնասիրվող պայմանագրերի վավերականության խնդիրների առնչությամբ առաջացող մի շարք իրավական հարցադրումներ:

Հետազոտության թեմայի մշակվածության աստիճանի վերաբերյալ հեղինակն արդարացիորեն նշում է, որ ուսումնասիրվող պայմանագրերին նվիրված են մի շարք հայաստանյան, ռուսաստանյան և այլ արտասահմանյան մասնագետների գիտական հոդվածներ: Այնուամենայնիվ ընգծվում է նաև, որ այդ աշխատանքներն առավելապես նվիրված են այդ պայմանագրերի պատմական և քաղաքական, սակայն ոչ իրավական ասպեկտների ուսումնասիրությանը: Հեղինակը հիմնավորված եզրակացնում է, որ միջազգային պայմանագրերի իրավունքի տեսակետից ուսումնասիրվող պայմանագրերին նվիրված համապարփակ հետազոտական աշխատանքներ չեն իրականացվել, ինչի

հետևանքով մինչ օրս այդ պայմանագրերի վավերականության խնդիրը շարունակում է մնալ քիչ ուսումնասիրված:

Գրախոսվող աշխատանքի **գիտական նորույթն** առաջին հերթին կայանում է նրանում, որ հեղինակի կողմից հետազոտության միջոցով առաջին անգամ փորձ է կատարվել՝ ժամանակագրական համակարգմամբ կոնսոլիդացնելով և ուսումնասիրելով խնդրո առարկա պայմանագրերի կնքման հիմքում ընկած իրավական փաստերը, այդուհետ դրանք վերլուծելով միջազգային իրավունքի գիտությանը հայտնի միջազգային պայմանագրերի անվավերության բոլոր հիմքերի տեսակետից, իրականացնել Հայաստանի տարածքային շահերին վերաբերվող XX դարի սկզբին կնքված պայմանագրերի համապարփակ ուսումնասիրություն՝ վերջիններիս միջազգային իրավունքի համատեքստում վավերականության խնդիրների տեսակետից:

Հետազոտության գիտական նշանակությունը պայմանավորված է այն հանգամանքով, որ դրանում ներկայացված վերլուծությունը կարող է ծառայել որպես ուսումնասիրության օբյեկտի և առարկայի հետ անմիջականորեն առնչվող պատմական և իրավական գիտելիքների համախմբված աղբյուր:

Ինչ վերաբերվում է **հետազոտության գործնական նշանակությանը**, ապա դրա շրջանակներում ձեռք բերված արդյունքները թույլ կտան, որպեսզի Հայաստանի Հանրապետությունը դադարի լինել արտաքին դիտորդ այն հարցում, թե ինչպես 100 տարի առաջ իր տարածքային հարցը լուծվեց և շարունակում է մնալ Ռուսաստան-Թուրքիա հարաբերությունների համատեքստում, այլ թույլ կտա, որպես ինքնիշխան պետության, մշակել սեփական հիմնավորված դիրքորոշումը՝ իր համար այնպիսի կարևոր խնդրի վերաբերյալ, ինչպիսին է իր սեփական տարածքային շահերի ամբողջությունը:

Բացի վերը նշվածից, սույն ուսումնասիրության նյութերը կարող են արդյունավետ օգտագործվել «Միջազգային իրավունք», «Միջազգային հարաբերություններ», «Աշխարհաքաղաքականություն. Հայաստան և տարածաշրջան», «Միջազգային պայմանագրերի իրավունք», «Հայաստանի միջազգային պայմանագրային իրավունք» և այլ դասընթացների ուսուցման գործընթացում:

Գրախոսվող աշխատանքը բաղկացած է երեք գլուխներից, որոնք ներառում են ութ ենթագլուխներ: Հարկ է նշել, որ հեղինակի կողմից մշակված ատենախոսության կառուցվածքը լավագույնս նպաստել է վերջինիս կողմից կատարված ամբողջական և բազմակողմանի վերլուծությունը և առաջ քաշած խնդրների լուծումները ներկայացնել առավել պարզ և մատչելի եղանակով: Աշխատանքը գրված է գրագետ, իրավաբանական լեզվով:

Ատենախոսության սեղմագիրն արտացոլում է հետազոտության հիմնական դրույթները, իսկ հեղինակի կողմից հրատարակված յոթ հոդվածները լիարժեքորեն արտացոլում են ատենախոսության հիմնական արդյունքները:

Վերը նշվածի հետ մեկտեղ հարկ է արձանագրել, որ աշխատանքի վերաբերյալ առկա են որոշ նկատառումներ և առաջարկություններ: Մասնավորապես՝

1. Ատենախոսության 64-74-րդ էջերում հեղինակը իրականացնում է պետության ներկայացուցչին հարկադրելու ներքո կնքված պայմանագրերի մասով գոյություն ունեցող պետական պրակտիկայի լայնածավալ վերլուծություն: Տվյալ վերլուծության մեջ, սակայն, բացակայում է այդպիսի պայմանագրերի ամենավառ օրինակներից մեկի՝ Բոհեմիայի և Մորավիայի պրոտեկտորատի մասին 1939 թվականին կնքված պայմանագրի ուսումնասիրությունը:

Մեր կարծիքով՝ նշված պայմանագրի կնքման հիմքում ընկած իրավական և փաստական հանգամանքների ուսումնասիրությունը և վերլուծությունը, անկասկած, կաջակցեին հեղինակի վերլուծությանը և կամրապնդեին ու առավել արժեքավոր կդարձնեին նրա կողմից արված եզրակացությունները:

2. Հեղինակը աշխատանքի «Ուսումնասիրվող պայմանագրերի վավերականության հիմնախնդիրները ժամանակակից միջազգային իրավունքի համատեքստում. ուժի գործադրման կամ դրա սպառնալիքի կիրառման արգելքի վերաբերյալ իմպերատիվ (*jus cogens*) նորմի առաջացումը» վերտառությամբ III գլխի շրջանակում (էջեր 109-121), ի թիվս այլնի, առանձին վերլուծության է ենթարկում վերոնշյալ նորմի՝ որպես սովորութային ճանաչելու ժամանակահատվածը՝ մատնանշելով տվյալ հարցի մասով աղբյուրների սակավությունը: Միևնույն ժամանակ հեղինակի կողմից չի ուսումնասիրվել միջազգային իրավունքի անվանի

մասնագետ Գրիգորի Տունկինի աշխատությունները, մասնավորապես՝ 1983 թ.-ի «Право и сила в международной системе» աշխատանքը, որում վերջինս անմիջական անդրադարձ է կատարում հեղինակի կողմից ուսումնասիրվող հարցերին:

Մեր կարծիքով՝ ատենախոսությունը տեսականորեն առավել կշահեր, եթե հեղինակը, նշված III գլխի շրջանակներում, ուսումնասիրեր նաև նշված աշխատությունը:

3. Ցանկալի կլիներ նաև, որ հեղինակն առավել մանրամասն անդրադառնար Հայաստանի Հանրապետության ներկայիս սահմանների հստակեցման և այդ կապակցությամբ մեր երկրի արտաքին քաղաքականության հիմնական ուղղությունների որոշման վրա համապատասխան միջազգային պայմանագրերի վավերականության հարցի լուծման հնարավոր ազդեցությանը:

Մեր կարծիքով՝ տվյալ պարագայում, հատկապես ներկա ժամանակաշրջանում, քննարկվող հետազոտությանն ու դրա արդյունքներին կտրվեր առավել մեծ նաև գործնական նշանակություն:

Միևնույն ժամանակ հարկ է նշել, որ մատնանշված նկատառումները, առաջարկություններն ու դիտողություններն ունեն մասնավոր և խորհրդատվական բնույթ և չեն կարող էականորեն ազդել Ս.Ա.Մանթաշյանի գիտական հետազոտության ընդհանուր դրական գնահատականի վրա:

Ատենախոսությունը և սեղմագիրը պատրաստված են ՀՀ ԲՈԿ-ի սահմանած պահանջներին համապատասխան, իսկ Ս.Ա.Մանթաշյանի կողմից հրատարակված հոդվածներում լիարժեքորեն արտացոլված են ատենախոսության հիմնական դրույթները:

Ատենախոսության թեման և բովանդակությունը համապատասխանում են ընտրված մասնագիտությանը:

Հետևաբար, Սոնա Արմենի Մանթաշյանի «Հայաստանի տարածքային շահերին վերաբերվող XX դարի սկզբին ստորագրված պայմանագրերի վավերականության խնդիրը» թեմայով ատենախոսական հետազոտությունն իրենից ներկայացնում է արդիական, գիտական նորույթ պարունակող, գիտական և գործնա-

կան նշանակություն ունեցող ավարտուն, ինքնուրույն ուսումնասիրություն, որը ներառում է միջազգային իրավունքի տեսության և պրակտիկայի համար կարևոր նշանակություն ունեցող խնդիրների վերաբերյալ գիտականորեն հիմնավորված լուծումներ: Հետազոտության արդյունքները միջազգային իրավական գիտության ոլորտի համար ունեն մեծ նշանակություն:

Վերոգրյալը հիմք է տալիս եզրակացնելու, որ Սոնա Արմենի Մանթաշյանի «Հայաստանի տարածքային շահերին վերաբերվող XX դարի սկզբին ստորագրված պայմանագրերի վավերականության խնդիրը» վերտառությամբ ատենախոսությունը լիովին համապատասխանում է Հայաստանի Հանրապետությունում գիտական աստիճանաշնորհման Կանոնակարգով սահմանված պահանջներին, իսկ հեղինակն արժանի է ԺԲ.00.06 – «Միջազգային իրավունք» մասնագիտությամբ իրավաբանական գիտությունների թեկնածուի աստիճանի շնորհմանը:

Ատենախոսությունը քննարկվել և 2021 թվականի հուլիսի 12-ից 15-ը դրվել է գրավոր քվեարկության Արդարադատության ակադեմիայի գիտական խորհրդում և արժանացել գիտական խորհրդի անդամների դրական եզրակացությանը:

«_15_» հուլիսի 2021թ.

Արդարադատության ակադեմիայի
գիտահետազոտական և ծրագրամեթոդական
աշխատանքների կազմակերպման բաժնի
գլխավոր մասնագետ **Ա.Աբրահամյան**